*ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության*
*ծառայության քաղաքացիության շնորհման պետի փեղակալ*
*Սյուզաննա Մանասյանին*

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ՔՇՎ քաղաքացիության շնորհման և դադարեցման բաժնի
փորձագետի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ
(10.05.2025 -06.08.2025 թթ.)

2025 թ. մայիսի 10-ից օգոստոսի 10-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ՔՇՎ քաղաքացիության շնորհման և դադարեցման բաժնի փորձագետ Գայանե Վահանի Գրիգորյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Ուսումնասիրել և ընթացքավորել եմ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց դիմումները՝ բռնի տեղահանության շտեմարանում իրենց տվյալները ստուգելու կամ ներառելու վերաբերյալ:
- ՄՔԾ պետի հրահանգով ներգրավված եմ եղել «Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) ծրագրին» առնչվող աշխատանքներում՝ նամակագրություն, թարգմանություններ, ՊՄԳ պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագրերի խմբագրում, մասնավոր գործընկերոջ թիմի հետ հանդիպումների օրակարգերի կազմում, մասնակցություն բանակցություններին, աշխատանքների ընթացքի վերահսկում և այլն:
- Մասնակցել Եվրոպայի Խորհրդի հայաստանյան գրասենյակի «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդում» ծրագրի շրջանակում Ծաղկաձորում անցկացված Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ընթացիկ բարեփոխումներին և

բռնի տեղահանված անձանց հասանելի ծառայություններին նվիրված երկօրյա աշխատաժողովին:

- Մասնակցել եմ ՄՔԾ պետի տեղակալ Մարիամ Գևորգյանի և Անձը հաստատող փաստաթղթերի վարչության պետ Աննա Մակարյանի՝ «Քաղաքացիական հաբ» ԵՀԿ-ի նախաձեռնած հանդիպմանը ԼՂ-ից տեղահանված մի խումբ կանանց հետ: Հանդիպումը վերաբերում էր ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչությանը մատուցվող ծառայություններին և նրանց իրազեկմանը:
- Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ՄՔԾ պետ Նելլի Դավթյանի այլ բազմաբնույթ հանձնարարականներ:

Հարգանքով՝

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ ՔՇՎ քաղաքացիության

շնորհման և դադարեցման բաժնի փորձագետ ____ Գ. Գրիգորյան

«06» 08 2025 թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները

գնահատում եմ «գերազանց»

*ՀՀ ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության*

*ծառայության քաղաքացիության շնորհման*

*պետի տեղակալ*

*Սյուզաննա Մանասյան* ____

*«06» 08 2025 թ.*